

զական բառ, որ սովորական է գիւղացոց: Ըստ Նալբանդեանի (Լուսմայ 1904 թ. № 2)-ցից ներքին ծամելեաց, Կարծեմ, պարզ է: «Մզեղդ չի կարող կտրի», «սկի մզեղդ չարժի», «հըլա էն մզեղին տեսէք», «սո մզեղ... «Ահա թէ ինչո՞ւ Դաւթեանները Դանիէլին «մօզիւղ» կամ «մզեղ» էին կոչում: Մանաւանդ մազեղը գործածական չէ՞ եղել հայերիս մէջ, և չէ՞, այլ մազոտ են ասում այդպիսիներին: Պէտք է յայտնի լինէր էջ-միածնեցոց նախնական խօսակցութեան ձևն իւր վերին աստիճանի պարզութեամբ և հայկական տօնով, համեմած լինելով ըստ Աշտարակցոց սովորութեան, որոնք ցայսօր էլ պահել են և պահում են ու գործածում մի առանձին հաճութեամբ:

ՍԻՕՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ. Յ. ա. ք. Մ. Պատկանեանի մասին Ձեր յօդուածը ստացանք. կտպինք միւս համարում:

ՀԱԼԼԷ. Յ. Բողիեան. - «Morfium» յօդուածը ստացանք:

ԲԱԳՈՒ. Մ. Բ. - Ձեր մեծ յօդուածի մասին նամակ գրեցիք, մեր որոշումը կիմանաք այնտեղից:

ԱՌԱՋԱԶՈՐ. Արշ. Մարտիրոս. - ստացանք Իւրիյ Վեսելովսկու «ժամանակակից հայկական պօէզիայի մի քանի եղանակներ» յօդուածի թարգմանութիւնը: Կկարդանք և կյայտենք մեր որոշումը:

ԹԻՖԼԻՍ. Հայկ Տէր Աստուածատրեանց. - Մախլասի «մի համեստ կարծիք» յօդուածի մասին խմբագրութեանս ուղղած Ձեր գրութիւնը, որով յայտնում էք Ձեր հայեացքները և համակրութիւնը յիշեալ յօդուածին, չենք կարող տպել:

Կ. ՊՕԼԻՍ. Յ. ա. ք. Մ. - Պատասխանում ենք. - «Հարիւր տարուց յետոյ» վէպի տպագրութիւնը ընդհատուեց մեզանից անկախ պատճառներով: «Էմիլի» Բ. մասը կտպինք այս տարի: «Հայրեր և դաւակներ» լրացած է այդքանով: «Կանոնը ժողովոց» յայտնի չէ կտպուի թէ ոչ:

ՌՈՍՏՈՎ. Մինաս Բերբերեան. մեր երկրորդ փորձն էլ անյաջող անցաւ Ձեր յօդուածի վերաբերութեամբ: Անճարը կերել է բանջարը: